

ղեացն բնակչացն, եւ էր ինչ որ ի սաստկութենէն ջուրցն դիմեցմանց. եւ տարակուսեալ<sup>1</sup> զաւրբն՝ ինդրէին տեղիս անցի, եւ ոչ գտանէին. եւ փորձելով ոմանց զբազում տեղիս՝ ընկղմեալք ի ջուրսն, եւ հազիւ գտեալ անդրէն էլս ապրէին: 7 Իսկ քաջ զաւրավարն Զայոց Վահան Մամիկոնեան մերձեալ ի տեղի մի յեզր գետոյն, եւ տեառնագրեալ զինքն նշանաւ խաչին սրբոյ կենսատուի՝ իջաներ ի գետն, եւ որպէս ընդ յոյժ տեղի ծանծաղ՝ անցաներ խաղաղութեամբ ընդ ջուրսն, որ եւ տեղին ամենայն գնդին լինէր ճանապարհ անցից անհոգութեամբ: 8 Եւ լինէր այս նշան մեծ յայտնի, որ եւ առ ոյժ<sup>2</sup> կացածի արանց լինէր անցանել<sup>3</sup> դիւրաւ ըստ կամի եւ ամենայն այրեւծիոյն. ի ճշմարիտ հիմնացեալ հաւատոյն քաջ զաւրավարին Զայոց Վահանայ՝ լինէր նշան որպէս Իսրայելեան ժողովրդոցն՝ յանցանելն իւրեանց ընդ Յորդանան: 9 Եւ ապա մտեալ յոստանն ի Դուին, եւ զշնորհակալութեան զպատարագն մատուցեալ Աստուծոյ արժանաւորապէս, եւ նախ զաղքատացն ողորմածութեամբ ըստ սովորութեան կատարեալ զտուրս՝ ուրախանային եւ ինքեանք ըստ Աստուծոյ հաճոյիցն ինդալից սրտիւ:

10 Եւ կազմեալ Մամիկոնենին Վահանայ զայրեւծին Զայոց՝ արձակեր ի դուռն, կարգեալ զգունդն ի ձեռն Վրենայ Վանանդացոյ. ընդ որս կազմեալ արձակեր եւ զիւր եղբարորդի մի, զորդին նահատակին Վասակայ զԳրիգոր: 11 Որոց հասեալ ի դուռն ժամանք՝ երթային պատրաստութեան գործոյ պատերազմին, եւ հարեալք ի դիմի միմեանց գունդքն երկութեան, եւ մատնեալ ի պարտութիւն գունդն Չարեհի՝ փախստական լինէին, եւ բազում վիրաւորք անկեալ յերկիր կործանէին: 12 Անդ քաջացեալ հայրանման սեպուհն Մամիկոնեից<sup>4</sup> Գրիգոր, ցուցեալ մեծ քաջութիւն՝ յայտնի լինէր զաւրավարին եւ զաւրացն ամենեցուն, եւ հռչակեալ նորա լաւութեան անուն՝ հասաներ մինչ ի թագաւորն Վաղարշ: 13 Լաւացեալ եւ սեպուհն Վանանդացի Վրէն, գործ երեւեցուցեալ<sup>5</sup> քաջանայր: 14 Իսկ Չարեհն փախուցեալ ի լեռնակողմն տեղիս ամրանայր. զոր ձերբակալ արարին եւ ածին ի հրապարակն արթունի, եւ անդ նման անասնոյ փողոտէին յանխնայ:

**ՂԵ.** Եւ յետ սակաւ աւուրց ստիպով ժողովեալ Մամիկոնենին Վահանայ զայրեւծին<sup>6</sup> Զայոց, եւ ինքն եւ ամենայն ուխտակից նախարարքն ընդ նմա՝ չուեալ գնայր առ թագաւորն Վաղարշ. եւ գնացեալք ըստ պատեհի աւուրց աւթեւանաց ճանապարհին՝ երթեալ հասաներ ի դուռն: 2 Եւ լուեալ թագա-

1 Ձ. \*տարակուրեալ

2 Ձ. որ եւ առ յոյժ կացայցի արանց? ԲԳտ. առ ոյժ-ի մասին ունին ծնթ. «գուցէ անոյժ»:

3 Ձ. \*անցանել

4 Ձ. մամիկոնենից

5 Կամ՝ գործ երեւելի ցուցեալ (ըստ Բ. Ն.)

6 ՏՏ. զայրեւծին